«Բացահայտիր ողջ ներուժը» արշավի իրականացման պայմաններ

1. Ներածություն

1.1 American Express Gold Քարտատերերին տրամադրվող լրացուցիչ Membership Rewards միավորների ծրագիրը /այսուհետ՝ Ծրագիր/ իրականացվում է «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ի կողմից:

1.2 Ծրագրի կազմակերպիչ հանդիսանում է «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ն /այսուհետ՝ Կազմակերպիչ/:

1.3 Մասնակցելով Ծրագրին՝ մասնակիցը անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները:

1.4 Սույն Պայմաններին և Դրույթներին վերաբերող ցանկացած որոշում համարվում է վերջնական և անվիճարկելի:

2. Ընդհանուր դրույթներ

2.1 American Express Gold /այսուհետ՝ Քարտ/ քարտատերերին /այսուհետ՝ Քարտատեր/ տրամադրվող լրացուցիչ Membership Rewards միավորների ծրագրին վերաբերվող ողջ տեղեկատվությունը տրամադրվում է www.acba.am և www.americanexpress.am կայքերում:

2.2 Կազմակերպիչն իրավունք ունի ցանկացած պահի փոփոխություն կատարել սույն Պայմաններում և Դրույթներում, որի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն կտեղադրվի Ծրագրի 2.1 կետում նշված հարթակներում:

2.3 Ծրագրի շրջանակներում տրամադրվող Membership Rewards միավորները տրամադրվում են առանց որևէ հարկային պարտավորության: Հարկային պարտավորությունների կատարումը ստանձնում է Կազմակերպիչը:

ACBA-CREDIT AGRICOLE BANK

3. Մասնակցության պայմանները

3.1 Ս.թ. հունիսի 20-ից դեկտեմբերի 20-ը (ներառյալ) իրականացվող Ծրագրի ընթացքում այն Քարտատերերին, ովքեր արշավի 6 ամիսների ընթացքում կիրականացնեն 8,000,000 (ութ միլիոն) ՀՀ դրամի (կամ համարժեք արտարժույթ) կամ 4,000,000 (չորս միլիոն) ՀՀ դրամի (կամ համարժեք արտարժույթ) վճարային գործառնություններ (Հայաստանում և արտերկրում), բացի ստանդարտ մեխանիզմով տրամադրվող MR միավորներից կտրամադրվեն լրացուցիչ Membership Rewards միավորներ (այսուհետ՝ MR միավոր) ստորև նշված կարգով.

3.1.1. 8,000,000 (ութ միլիոն) ՀՀ դրամի վճարային գործառնությունների դիմաց Դուք կարող եք ունենալ

- 60,000 (վաթսուն հազար) լրացուցիչ MR միավոր կամ
- Երևան-Նյու Յորք-Երևան էկոնոմ դասի ավիատոմս 1 անձի համար

3.1.2. 4,000,000 (չորս միլիոն) ՀՀ դրամի վճարային գործառնությունների դիմաց Դուք կարող եք ունենալ

- 30,000 (երեսուն հազար) լրացուցիչ MR միավոր կամ
- Երևան-Փարիզ-Երևան էկոնոմ դասի ավիատոմս 1 անձի համար

3.2 Քարտից քարտ փոխանցումները, ինտերնետային վճարումները, քարտով կատարված կոմունալ վճարումները, էլեկտրոնային դրամապանակների միջոցով կատարվող գործարքները և բջջային օպերատորների գրասենյակներում կատարվող վճարումները չեն դիտարկվի որպես վճարային գործառնություններ:

3.3 Ծրագրին կարող են մասնակցել American Express Gold բոլոր Քարտատերերը: Ընդ որում՝ կից American Express Gold Քարտի Քարտատերերը չեն կարող մասնակցել հիմնական Քարտից անկախ: Կից American Express Gold Քարտերով կատարված գործարքների արդյունքում կուտակված MR միավորները գումարվում են հիմնական Քարտի համար կուտակված MR միավորներին:

3.4 Լրացուցիչ MR միավորները կտրամադրվեն միայն այդ նպատակով Բանկ դիմած Քարտատերերին:

3.5 Լրացուցիչ MR միավորներն ավիատոմս ձեռք բերելու նպատակով հնարավոր է օգտագործել մինչև 2020թ. դեկտեմբերի 20-ը:

3.6 Ավիատոմսի պատվերը պետք է իրականացնել մեկնման ցանկալի ժամկետից առնվազն մեկ ամիս առաջ:

3.7 Ավիատոմսը հնարավոր է ամրագրել միայն 2020թ. հունվարի 15-ից մինչև դեկտեմբերի 20-ը ընկած ժամանակահատվածի համար:

3.8 Եթե լրացուցիչ 60,000 MR միավորներն ավիատոմսերի հնարավոր թանկացման պատճառով չեն բավականացնում ավիատոմսի պատվերի պահին Երևան-Նյու Յորք-Երևան ավիատոմս ձեռք բերելու համար, ապա օգտագործվում է Քարտատիրոջ՝ ստանդարտ մեխանիզմով կուտակված 16,000 MR միավորները: Վերջիններս (60,000 MR միավոր+16,000 MR միավոր) չբավականացնելու դեպքում Կազմակերպիչը փոխհատուցում է ավիատոմսի արժեքի տարբերության չափով: Այն դեպքում, երբ Ծրագրի շրջանակներում ստանդարտ մեխանիզմով կուտակված 16,000 MR միավորներն օգտագործվում են նախքան ավիատոմսի ձեռքբերումը, ապա Կազմակերպչի կողմից միայն փոխհատուցվում է լրացուցիչ 60,000 MR և ստանդարտ մեխանիզմով կուտակված

16,000 MR միավորների հանրագումարին համարժեք արժեքի և Երևան-Նյու Յորք -Երևան ավիատոմսի արժեքի տարբերությունը:

3.9 Եթե լրացուցիչ 30,000 MR միավորները ավիատոմսերի հնարավոր թանկացման պատճառով չեն բավականացնում ավիատոմսի պատվերի պահին Երևան-Փարիզ-Երևան ավիատոմս ձեռք բերելու համար, ապա օգտագործվում է Քարտատիրոջ՝ ստանդարտ մեխանիզմով կուտակված 8,000 MR միավորները: (30,000 MR միավոր+8,000 MR միավոր) չբավականացնելու դեպքում Կազմակերպիչը փոխհատուցում է ավիատոմսի արժեքի տարբերության չափով: Այն դեպքում, երբ Ծրագրի շրջանակներում ստանդարտ մեխանիզմով կուտակված 8,000 MR միավորներն օգտագործվում են նախքան ավիատոմսի ձեռքբերումը, ապա Կազմակերպչի կողմից միայն փոխհատուցվում է լրացուցիչ 30,000 MR և ստանդարտ մեխանիզմով կուտակված 8,000 MR միավորների հանրագումարին համարժեք արժեքի և Երևան-Փարիզ-Երևան ավիատոմսի արժեքի տարբերությունը:

3.10 Արշավի ընթացքում 3.8 և 3.9 կետերում սահմանված պարգևատրումները տրամադրվում են հաշվի առնելով Քարտատիրոջ կողմից Բանկում գործող Քարտերով կատարված վճարային գործառնությունների հանրագումարը: Ընդ որում, յուրաքանչյուր Քարտապանին կարող է տրամադրվել 3.8 կամ 3.9 կետերում սահմանված առավելագույնը մեկ պարգևատրում:

3.11 Ավիատոմսը ձեռք է բերվում Բանկի կողմից Բանկի հետ համագործակցող տուրիստական ընկերություններից: Ընդ որում, 3.8 և 3.9 կետերում սահմանված ավիատոմսերը կարող են լինել ինչպես ուղիղ, այնպես էլ տարանցիկ չվերթներ: Չվերթի ընտրությունն իրականացվում է Կազմակերպչի կողմից:

3.12 Ծրագրի համար սահմանված ժամանակահատվածում նոր American Express Gold Քարտի համար դիմելու և քարտը ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում առնվազն 1 (մեկ) վճարային գործարք կատարելու դեպքում բացի ստանդարտ մեխանիզմով տրամադրվող MR միավորներից կտրամադրեն ևս 5,000 Welcome MR միավորներ:

3.13 3.12 կետը գործում է միայն տարեկան սպասարկման միջնորդավճարով սպասարկվող և միջնորդավճարը վճարած քարտերի դեպքում:

3.14 Քարտատիրոջ կողմից իր գործող Քարտը փակելու կամ փոխարինելու և նույն արժույթով Քարտ պատվիրելու դեպքում 5,000 Welcome MR միավոր չի տրամադրվում:

3.15 Լրացուցիչ MR միավորները ստանալու համար պետք է 2020թ. հունվարի 10-ից մինչև 2020թ. մարտի 15-ը (ներառյալ) ընկած ժամանակահատվածում զանգահարել Բանկի շուրջօրյա սպասարկման կենտրոն՝ (+374 10) 31 99 99 հեռախոսահամարով կամ գրավոր դիմում ներկայացնել Բանկի ցանկացած մասնաճյուղ:

3.16 3.15 կետում սահմանված ժամկետում Բանկ չդիմելու դեպքում Ծրագրի շրջանակներում Լրացուցիչ MR միավորներ չեն տրամադրվի: